

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա.Շ Խ Ա.Բ Հ Ի Կ Կ Ա.Մ Ն Ո Ր Լ Ե Զ Ո Ւ

Թէ պէտք և այլ և այլ գարերէ ՚ի վեր
է հայերէն աշխարհիկ սեպուած լե-
զուին սովորական կիրառութիւնը ազ-
դերնուած մէջ, բայց վրան եղած ուսու-
մական տեսութիւնը և քննութիւնը
միայն վերջի քանի մը տասը տարինե-
րու հետազօտութեանց արդինք են :

Ասոր ալ պատճառը յայտնի է :

Դեռ մեզմէ քիչ յառաջ կը կարծուէր
թէ աշխարհիկ լեզուն՝ միայն խօսելու
համար է. գրելու և կարդ-ալու յատուկ
է գրաբարը : Բայց երբ այս կարծեաց
դէմ սկսաւ մաքառիլ ժամանակը, և
կրթութիւնն և ուսումը ժողովրդական
ընելու գովելի ջանք մը՝ աշխարհիկ լե-
զուով յօրինուած այլ և այլ գրքեր ե-
րեցուց, բնական հետեւանք մըն էր նոյն
բարբառոյն կազմակերպութիւնն քննե-
լը, և անոր կատարելադրդութեան
վրայ աշխատիլը :

Այլ և այլ կերպարանքի տակ քննու-
թեան առնուած է աշխարհիկ լեզուի
խնդիրը :

Նախ թէ արդեօք մեր աշխարհիկ
լեզուն՝ մասնաւոր ու յատուկ բարբառ-
մըն է, որ եթէ չունի իր որոշ պատճու-
թիւնը՝ հարկ է որ ունեցած ըլլայ իր
սկիզբն ու ծագումը, անկախ ամեննին
գրաբարէն : Զէ նէ

Գրաբարի աղաւաղութեանն ու ժողո-
վրդական ըլլալուն արդինք լեզումըն է,
երկու կարծիքն ալ ունեցած են ի.

բենց կուսակիցքն ու հետեւղները :

Ոմանք կը համարին՝ թէ յատուկ աշ-
խարհիկ լեզու մը ունեցած չենք . այլ
մեր միակ լեզուն՝ նախնեաց գրած ու
նաև խօսած՝ գրաբարն է . իսկ աշխար-
հիկը անոր անկերպարան ծնունդն է .
մտաւրական խաւարի տգիտութեան
ու քաղաքական գերութեան արդինք
մը և հետեւանք :

Իսկ այլք թէ ուրիշ էին մեր նախ-
նեաց քով գրաւոր և խօսուած լեզու-
ներն, իրարմէ ամեննեին անկախ . և
ժամանակը՝ ինչպէս գրաբարին, ասանկ
ալ աշխարհիկ լեզուներնուա վրայ ու-
նեցած է իր ազգեցութիւնը :

Առջի կարծիքն ունեցողներուն բնա-
կան փափաքն ու բերումը կ'ըլլայ՝ աշ-
խարհիկ լեզունիս մաքրել, կարդի ու
կանոնի վրայ առնուլ : Այդ մաքրու-
թեամբ ու կանոնաւորութեամբ կը հաս-
կրնան՝ ետեէ ըլլալ որ օր օրուան վրայ
խօսուած լեզուին կազմութիւնն ու կա-
նոններն գրաբարի մօտենալով, վերջա-
պէս երթայ միանայ անոր հետ :

Իսկ երկրորդ կարծեաց հետեւղք՝ ո-
րովհետեւ նախնեաց քով իրարմէ տար-
բեր լեզուներ կ'ենթագրեն, գրուած և
խօսուած, ուստի և կը ջանան որ ինչ-
պէս հին լեզուն, ասանկ ալ նորն ունե-
նայ իր յատկութիւններն, մասնաւոր
կազմակերպութիւնն և կանոնաւոր յա-
ռաջատութիւնը :

Այս երկու հակառակ դրութիւններն՝ կարելի կ'ըլլայ միարանել, ենթաղրելով թէ,

Հայոց մէջ հնութենէ մինչև առ մեզ հասած սակաւաթիւ յիշտափարանաց քննութեամբն ալ, անտարակուսելի կ'երենայ թէ հին ատենէն 'ի վեր ուրիշ էին իրարմէ գրաւոր ու խօսուած լեզունքը. և թէ հաւանականաբար՝ այս վերջիններն աւելի էին թուով:

Այդի ժամանակներն խօսուած լեզուներն, թէպէտ և ոչ երբեք այն գրաբար լեզուն՝ ինչ որ բանասիրութիւնը կը հասկընայ այդ բառին բուն նշանակութեամբը, շատ աւելի յատակ և մաքուր էին, անխառն օտար ազդեցութիւններէ: վասն զի:

Ազդին այլ և այլ գարական տառապանքը՝ ինչպէս զգրաւոր, ասանկ ալ աշխարհիկ բարբառը տառապանաց ու խանգարմանց ենթակայ ըրին:

Որչափ աւելի յաճախեցին անոնք, այնշափ աւելի և հետզհետէ խառնակ աղաւաղութեան կերպարանք մը առին խօսուած լեզուներն:

Այս ըստ ոմանց՝ յայտնի, և ըստ այլց՝ ենթաղրուած կարծիքն կէտ գնելով մեր համառօտ տեսութեանցը, քընենք նախ. թէ,

* *

Ունի արդեօք մեր աշխարհիկ լեզուն իր պատմութիւնը:

Այսպիսի էական կէտի մը վրայ՝ կամ բոլորովին կը լրէ, և կամ քիչ կը խօսի մեր բանասիրութիւնը: Այդ լուսութեան դարմանն փնտուելու համար՝ պէտք է մեր հին պատմութենէն ալ առաջ անցնիլ, ու մեր գով պակասածը՝ մեզի դրացի ու մերձաւոր ազգաց մէջ որոնել:

Լեզուաբանական ուսմունք և հետազոտութիւնք՝ առաւելապէս մեր դարուն կը վերաբերին: Գիտութիւնք՝ անցելոյն գիւրին ժառանգութեամբը գոհ չըլլալով, ետեւ եղած են կրկին քննել հին մատեաններն, յիշատակարաններն. հեռաւոր ժամանակաց մինչև առ մեզ

հասուցած անտաշ քարինքն անդամ, ու յարատու ջանիւք շատ անդամ՝ կը յանդին անոնց հետ խօսիլ, ու պատասխանն ընդունել:

Այդպիսի երկար ու անխոնջ ուսմանց արդիւնք են՝ արևելեան մեզի դրացի ազգաց լեզուաց վրայ եղած քննութիւնք: Այն հետազոտութեանց հետեանկ եղած եղած է՝ բոլոր երանեան լեզուաց իրենք ժամանակ որոշել. հին, միջին և նոր լեզու: Անոնց կարդը սեպելով նաև զայկականն, հետեարար սցդ լեզուին ալ կու տան երեք սցլ և այլ ժամանակ. և կը կոչեն զիին հայերէնն՝ Հայկեան, զմիջնն՝ Գրաբար, և զնորն՝ Աշխարհաբար:

Բանասիրաց այս ենթաղրութիւնն ուզելով ընդունել, կը մնայ քննել թէ որին էր մեր մէջ այդ հին կամ Հայկեան լեզու կոչուածը:

Որչափ ալ արդի քննադատութիւնն և ուսմունք յանձն չառնուն չնորհել մեր պատմութեան այն հնութիւնը զոր 'ի համազգի հին պատմագրաց գրաւոր աւանդութիւններէն սիրով ընդունած է մեր հայրենասիրութիւնը, սակայն միշտ պատմական ու անհակառակելի ճշմարտութիւն մը կը մնայ իւր բազմադարեան հնութիւնը՝ նաև յառաջ քան զգիշտակարանն զպրութեան մերց:

Ազդին հետ՝ անհրաժեշտ հարկ է ենթագրել նաև իրեն յատուկ խօսուած լեզու մը. և որովհետև տոհմք՝ ազգէն յառաջ կը ձևանան, ու անոնց միութիւնը կը կազմէ զազդ, ուստի տոհմային՝ ըսենք նաև տնային լեզուն՝ պէտք է որ յառաջ ձևանայ քան զգրաւոր լեզու:

Ումանք կարծած են, ըսինք, թէ հիմակուան Հայաստանի դաւառալեզուք՝ աղաւաղութիւնք են զրաւոր լեզուի: Սակայն հին յիշատակարանք, թէպէտ և սակաւաւորք թուով, հակառակ հաւատարմութիւն մը կը թուին տալ. որով արդի գաւառական լեզուք՝ հին գաւառալեզուաց սերունդք կ'ըլլան:

Աս նկատմանք պատմական մէկ քանի հաւաստիքն յիշատակած, լսենք

Երզնկացւոյն՝ որ իր քերականական հմտութեամբն մեր ամէն մեծարանացն և հաւատարմութեան արժանաւոր է։ Խնդ՛ իր գրոցը մէջ այլ և այլ հին գաւառական բարբառներու դպյութեան վկայութիւնը կու տայ. զորոնք և մասնաւոր անուններով կը կոչէ Նշերական, Կորճային, Տայեցի, Խութայեցի, Չորրոդ. Հայեցի, Սպերացի, Մինի, Աքցախային, Միջներկրեայ և մասանիկ։

Այս գաւառալեզուաք՝ իրենց խօսուած երկրէն ու ժողովրդենէն առած են իրենց անուանքը. միայն վերջինը՝ երկրային կամ գաւառային նշանակութիւն մը չաննենալէն զատ՝ աղնուականութեան զրոշմն ալ կը կրէ. ուստանիկ կամ արքունական կոչուելով։⁴

Հայաստանի՝ ի հնուց բազմալեզու ըլլալն՝ խնդիր չէ, ըստ է ազգային բազմագէտ բանասէր մը. իր բազմաթիւ գաւառական բարբառներէն մէկն, և թերեւ այն՝ որ աւելի կերպով մը պահած էր իր մէջը մայր լեզուին յատկութիւններն, քրմաց ձեռքով, արքունեաց մէջ և նախարարաց քով գործածուելով, ու քաղաքականութեան մէջ անելով, գրաւոր լեզու դարձեր է. և գրութեամբ կոկուեր ու հաստատուեր է նոյն ձևերով ու ընտիր գարձուածներով. և որ նոյն գաւառին բնակիչներէն պահանջներ է որ լոյն բանեցընելու և

⁴ «Հայոց նոր լեզուին վրայ խօսող արդի մատենագիրը՝ հնութեան աւանդներն քննէլով, նախի ժամանակներին՝ ի վեր վեց գաւառական բարբառ կ' ենթադրեն, և որոնց նախուակներն Արարատեան, Կորուացի, Աղուան, Գուգարացի, Փառուն Հայաստանի մէջ ատզորական եւ զող բարբառ մը և Պարսկահայոց լեզուն։ Այս բարբառներն ընդհանրապէս կը խօսուեին այն գաւառներուն մէջ ուրեմն երկշած էին, և որոնք շատ անդամ անիմնասի կը մնային ուրիշ բնա. Կութեամբ մերձաւոր եղող հայազգեաց Ասանկ էր կորդուաց գաւառին մէջ խօսւածք ասանկ ալ Աղուանի կոյուածը, որ բարորմին յառակ բարբառ մըն էր այն ժողովրդով՝ որ Հայաստանի հրամանական կուտեսն էր բահկէին։ Իսկ Աւուականը ամենէն աւելի յերկարակեաց կը համարուի յօմսին։ և թէ նոյն լեզուն էր, որ չորրորդ գաւառն կարգի և կանոնի վրա առնելով, դրական և կանոնաւոր լեզու մը է զա»։ Léon Vaïsse, Encyclopédie moderne. Didot Arménie.

Հասկընալու համար՝ ետեւ ըլլան սորվիլ։

Այս լեզուն է ըստ ոմանց, նախնեաց լեզուով թստանիկ կոչուածը. և որ երբեմն՝ Արարատեան անունն ալ կրած է։ Սուրբն Մեսրովակ՝ հայերէն գրոց գիւտին հեղինակն ու ազգային զպրութեանց գլխաւոր յառաջացուցիչը, եւ կեղեցական վիճակ չմոտած Վուամշապհանց արքունեաց ատենադպիրն էր. և ամենէն աւելի իրեն ընտանի և ծանօթ, ըստնք նաև սիլիքի էր այն լեզուն՝ որով ոչ միայն հայ արքունիք կը վարուէին, այլ նաև հոնտեղին ելած ամէն գիւտանական արձանագրութիւնք, և որոց շատին զրիւ էր նա ինքն Մեսրովակ։

Այս տողերուն մէջ բացատրուած կարծեաց կը համաձայնի հանրածանօթ ազգային հմուտ բանասէր մը։⁵

«Երկրորդ երրորդ գարերու մէջ, կ' ըսէ, Հայաստանի զանազան գաւառական լեզուներէն մէկը՝ գերիշսանութիւն մը ստացաւ միւսներու վրայ, ու իսկոյն պաշտօնական ու գասական (classique) լեզու եղաւ։ Արարատեան նահանգի այս արքունի լեզուն՝ Աստանիկ կը կոչուէր, ինչպէս Պարսկաստանի արքունի լեզուն ալ Տէրիք։ Երբ Հայերն ընդունեցան քրիստոնէութիւնը շրրորդ զարու մէջ, ու ի հինգերորդին անոնց ազգային այրուեկնն յօրինուեցաւ, արքունի լեզուն եղաւ միակ զրական լեզու և գիտնական բարբառ։ Աստուածաշնչի թարգմանութիւնն ընդդհանրաց անոր զործածութիւնը։ Հոյակաւուր գրագիտաց երկասիրութիւնը նոյն ճոխացուցին զայն իսկոյն, և կատարելազործուեցաւ ասորի՛ և մանաւանդ յօյն զրականութեան ազդեցութեան միջին»։

Բայց թէ արդեօք նոյն իսկ աղջին աղնուապոյն և ընտիր մասին սովորական լեզուն կը նայք հասած ըլլավ այն ընտրութեան, որով կը ներկայանաց մեջի Սահակայ ու Մեսրովակայ ու իրենց

1 Պատկանեան Քերովթէ։

ստամին աշակերտաց գրչին տուակ, պատասխան կու տայ ուրիշ ազգային բանաէր մը :

« Անհաստատ է, կըսէ, այն կարծիքն, իբր թէ Հայաստանի մէջ եղած ըլլայ ժամանակ կամ երկիր մը, ուր խօսուէր հինգերորդ դարու Թարդմանչաց ու անոնց թարգմանած Աստուածաշունչ գրոց լեզուով՝ կարելի է որ հինգերորդ դարու Հայերն մեզմէ հարիւրապատիկ աւելի դիւրութեամբ կը հասկընային այն լեզուն, բայց երբեք խօսած չեն. անանկ որ ինչպէս հիմա, նոյնպէս և ամեն ժամանակ ու ամեն ազդի մէջ՝ հարկ էր սորվիլ զրաւոր կամ զրականական լեզուն, իթէ եղած է ժամանակ՝ յորում ամեն Հայերն խօսած ըլլան մէկ լեզուով, թերևս Հոյկայ ժամանակն ըլլայ, կամ շատ շատ՝ իրմէ երկու դար ետքը՝ Յետոյ ազգը բազմանալով՝ այլ և այլ գաւառներ ցըրուեր է. և ինչպէս ուրիշ ազգաց մէջ, ասանկ ալ առ մեզ, թէ աշխարհազրական և թէ կենցաղավարական հանգամնք՝ կամաց կամաց փոխած պիտի ըլլան իր մայր լեզուն, ու ժամանակաւ մտակայ ազգերէն ալ բան սորվելով, անոր տուած պիտի ըլլայ ամէն ձևեր ու դարձուածներ, որոնցմով լաւ որոշուած պիտի ըլլան գաւառական բարբառներն իրարմէ :

Այս ամեն անդրադարձութիւններն՝ գրեթէ պատմական ստուգութեան կերպարանք կ'առնուն, երբ մեր հին հագներգուաց կամ գողթան երգերուն լեզուին վրայ քննական ակնարկ մը ձգենք: Թէպէտ և քանի մը ու ցրիւ յիշատակուած հատակոտորք, հին ժամանակներէն մինչև առ մեզ հասած, բայց կրնան օժանդակել, կամ գէթ աղօտ ըստ մը ձգել նաև մեր հին գաւառական լեզուաց վրայ :

Տարակոյս չկայ որ այդ երդիչէն՝ կամ ազատաց դասուն վերաբերելով, կամ անոնց քով յաճախ եւմանւառ ունենալուն պատճառով, սովորականէն աւելի

ու իրենց քերթաղական հանճարոյն արժանաւոր կրթութիւն և ուսումն առած անձինք էին: իրենցմէ յօրինուած ու ինչուան առ մեզ հասած երգոց հատուածներն ալ երաշխաւորութիւն են այս կարծեաց: Բայց իրենց պաշտօն ու գործը՝ լոկ արքունեաց մէջ ամփոփուած չէր, միայն թագաւորաց ու նախարարներու զրօսասիրութիւնը և պարապոյ ժամերը զրազեցնելու. այլ այն նոխ բնակութիւններէն գուրս. ալ՝ կը սիրուէին ու կը փնտուուէին. վասն զի կերպով մը ժողովրդական ալ էր անոնց պաշտօնը, ընկերելով իրենց քնարաւն՝ անոնց ուրախութեանն և ցաւոց: Եթէ նոր սերունդէն՝ հին նախնեաց արժանաւոր ժառանգներ երկցնելու ջանքով ու դիտմամբ կը կրկնուէին անոնց յօրինած երգերն ու սիրալիք ընդունելութեան կը հանդիպէին, ապա ժողովրդական իմանալի լեզուով մը հիւսուած տաղեր պէտք էին ըլլալ: Այո՛, ճարտար մնքերէ ու ձեռքով, գրչի ու քերոցի տակ յլկուած արձաններ, այլ անոնց նիւթ մատակարարող անկերպարան քարինքը՝ ժողովրդեան գիտցած ու ճանչցած քարահատներէն պէտք էր որ առնուած ըլլային: Ժողովուրդը չէր կինար, — հարկ ալ չկար, — խօսել այդ լեզուն. այլ կը հասկընար ու կիմանար անոր ամէն քաղցրութիւնը. վասն զի ինչպէս նիւթը իրեն ծանօթ պատմութիւններէ առնուած, ասանկ ալ լեզուն հարկ էր որ ընտանի ըլլար:

* *

Այս խորհրդածութեանց հետեանք կ'ըլլայ թողով առ վայր մի գրաւորը, — ոստանիկ և կամ ուրիշ որ և իցէ անուն ուղենանք տալ անոր, և որուն համար ըսինք թէ աղնուաց և արքունի բարբառ ըլլալովը զրաւորականի պատուոյն բարձրացաւ, — և անկէ առաջ եղող լեզուի մը կամ լեզուներու հետքը փընտուել մեր հին մատենագրութեան մէջ. որպէս զի յաջողինք ապացուցանել թէ գաւառական ըստած բարբառներն ժո-

զովրդականք էին, և անոնց գոյութիւնը՝ յառաջ էր քան մեղի ծանօթ գրաւոր լեզուն :

Գրաւորու ու գաւառական լեզուաց մէջ եղած տարրերութիւնը յայտնի է : Թէ Քերականական կազմութիւնն և թէ բառոք՝ յաճախ այլ և այլ կերպարանաւափոխութիւննք կը կրեն այս վերջիններուն մէջ . վասն զի բերնէ բերան, քաղաքէ քաղաքու ու գաւառէ գաւառ անցնող խօսքն չի կրնար այն անարատութիւնը պահնէ զոր զիրը, և գրով հաստատութիւն առած կանոնը կու տայ անոնց :

Ինչպէս ամեն ազգաց, ասանկ ալ մեր գաւառալեզուաց համոր անդիմադարձ ծշմարտութիւնն մըն է այս :

Ուզած են ոմանք ենթադրել՝ եթէ այդ կերպարանափոխութիւնը ժամանակի արդիւնք են, որով գրաւոր լեզուն կրնայ հեռանալ իր սկզբնական պարզութենէն ու յստակութենէն : Բայց երբ մեր գրաւորական մատենագրութենէն ալ առաջ հանդիպինք՝ աշխարհիկ բառերու և առմանց գոյութեան, օտար ամեննեին ՚ի գրաբարէ, և ինչուան առ մեզ հասած գիրքերուն մէջ, և կամ նոյն իսկ ամենընտիր լեզուով շարադրուած զրոց մէջ ցանուած, թէպէս և զգուշաւոր ձեռքերով և որշգութեամբ այնուհետեւ տարակուսելու տեղի չի մնար :

Հոս ալ օրինակը ազգողագոյն է քան զրան : Միայն մէկ քանին մէջ բերենք, մեզմէ յառաջ այս նիւթիս վրայ գրողներու ընտիր ու բազմահմուտ երկասիրութիւններէն քաղելով :

Ինչուան առ մեզ հասած ու խօսուած հայ գաւառական լեզուներուն յատուկ, ու հաւասարապէս թէ յանուափի և թէ յուսումնասիրաց գործածուած ամեն, շատ սնգամ, աւելի, ու հարստացան բառերը ընտիր գրաբարի կազմակերպութենէն խիստ հեռու կը մնան : Բայց երբ կը հանդիպինք անոնց և նմաններու շրբորդ գարու մատենագրի մը երկասիրութեան մէջ, (Փ. Բիւզանդայ), կը բոնադատինք խոստովանիլ թէ աշխարհիկ կամ գաւառական կոչուած լե-

զոներուն ՚ոկղբնաւորութիւնը՝ սմանց ենթագրամին շափ նոր պէտք չէ սեպուի, և թէ աւելի հաւանականութիւն կ'առնու այլոց կարծիքը՝ որ գրական լիւ, զուէն առաջ կը դնեն անոնց ծագումը :

Հետագայ օրինակները չորրորդ դարու կը պատկաննին . Զամեն մնացեալոն : Ու ՚ի պատի զիլոյ : Շատ սնգամ ըմբը ըստնեալ է զիս : Աւելի զօրքն պատիւ : Ի տեղաց իշխանութեան իւրեանց : Ի վանք մի : Լնոյր զերկիրն վաներով : Լզան գանձիք բազմօք . . . և հարաւացան : Ի ձեռդ քոյ, - ի մարդոյ խօսելոյ : Թէ կամիք և թէ ոչ կամիք, բայց թէ մտանեմ : Եկ ասաքեմ զերել . Որ ՚ի տեղոյն շինաք քաղաք : Բարի եկիք :

Այսպէս արարից քեզ որ ասես շատ է : Ո՞ր մտագիր բանասէր յայտնի չի տեսներ այս տողերուն մէջ մեր աշխարհիկ լեզուն, ոճերովն, առմոնքովը և քերականական դասաւորութեամբ :

Բայց խօսքերնիս շատաւելի ոյժ կ'առնու : Երբ նոյն իսկ գրականութեան ոսկեգարէն՝ ուամկարանութեանց այլ և այլ օրինակներ մէջ բերենք : Նախ բառերու մէջ : Ասանկ . շոր (սառեր) . իրիկորն (երեկոյ) . ծուռ (թիւր) . տաք (Ծերմ) . յոգիկ (վաստակիկ) . ուժաւոր (զօրաւոր) . կարդացմունք (ընթերցումն) . հրամեկ (հրամացել) . կողմակալ (կուսակալ) . իւելացի, իմաստուն :

Մամկարանութիւնք քերականական կարգի մէջ, երբ կը գրեն . Յորմանէն - ՚ի վերայ բարձկներոյդ . - թէ քեզ պէտք է . - մատամբ մի չկամիք շարժել . - քանի անգամ . - կախեցին ՚ի վերայ փայտի . - վասն ինձ . զիշերքն որ եղեւ նա ՚ի մէջ մեռելոց . - քշեցուք . - եկէք կալէք զանցս լեռնային կողման . - եկ երբամբ շրջիմք ՚ի դաշտ . - մի անդամ մուանեն տեսանեմ, և երանեն գնամ ասափ . և ասեն՝ երդուիր մեզ որ ելանես :

Մամկարանութիւնք համաձայնական կարգի մէջ . Մկը զմեր թագաւորն՝ ուրով երեսօք տեսանեմք . - Միթէ շան զլուի եմ : - իմ երկու աջս խաւարե-

ցան յայս տեղւո՞ծ : — Զեր ուխտաւորք ընդէլ են մասհատք : Զօրք բազում դայ : — Միմեանց առաքեցին : — Մէկը որ այն ամենայն վասն մեր եղև : — Մերուժանն և այս անդամ փախչէր :

Այս յիշատակուած օրինակներուն մէջ եղնիկն անդամ, ամենէն աւելի յատակ սեպուած զրիչներէն մէկն, իր մասն ունի : Եւ որովհետև այս՝ հայերէն հին մատենագրութեան պատկառելի անունը և իր դարը յիշատակեցինք, առաջ անցնինք քիչ մ'ալ, իր ուսուցչաց դարն ու ժամանակը մէջ բերելով : Հո՞ն ալ դիմացնիս պիտի եղեն դաւառական լեզուաց յիշատակութիւնք :

* *

Պատմութիւննիս՝ չորրորդ դարու մէջ կատարուած ազգային նշանաւոր ու հանրածանօթ գէսքրի մը յիշատակութիւնը կ'ընէ :

Ժողովրդեան անթիւ բազմութիւն մը յազատաց և յանազատից, ու անոնց զլուխր զօրաւոր թագաւոր մը, կը խոնարհին կ'իյնան Աստուծոյ պատգամաւորի մը առջև, փրկութեան խօսքը լսելու :

Այն հրաշանշան առթով զուրցուած ու սրբյ լուսաւորչի ընծայուած ճառերն, որոնք թէ Ազաթանգեղեայ զրոց կարեսոր մէկ մասը կը կազմեն, և թէ մասնաւոր գրքով մը իր անունը կը կրեն ու հոգին կը վայլեցընեն, անշուշտ մեր յիշատակած արքունի կամ ազատաց բարբառոյն յատուկ ու սեպհական դըրոշն ունէին . և ժամանակ անցնելէն ետքը՝ ալ աւելի բարձրացան՝ գրաւոր կերպարանքի տակ մտնելով : Առողքն Գրիգոր իր քարոզութեան ձայնը ամենուն հաւասարապէս լսելի ընելու՝ դեղեցիկ ու աստուածահրաւէր առաքելութեան պարտականութիւնն ունէր . թէ աղասիք և թէ ոչ նոյնպիսիք՝ փափառող ու կարստ էին այն խօսքերուն . իրմով ճաշուած Աստուծոյն հրամանաց և պատուիրանաց ծանօթութեանն :

Այս ընդհանուր պէտքը՝ նիւթոյն ու զինքը մտիկ ընող բազմութեան արժանաւոր կերպով ու լեզուով կատարեց Գրիգոր : Կրնար, — ինչպէս հարկադրուած ալ էր, — օտար տառերու դիմել իր գրուածներն ապագայ ու գեռիրեն յատուկ տառեր չունեցող սերունդի մը աւանդելու համար . բայց իր դիմացը եղող ժողովրդեան հետ խօսելու ատենք՝ բռնագատուած էր ազգին հասկըցած ու իմացած, ու թերևս խօսակցութեան մէջ ոչ հասարակ եղած, լեզուովը խօսիլ :

* *

Կու գանք կը հասնինք մեր դպրութեանց ոսկեղարուն :

Նոյն ժամննակին պատմագրաց խօսքերը՝ յայտնապէս կը նշանակեն բարբառներու տարբերութիւն մը ՚ի Հայատան . և որք այնչափ աւելի կերպարանափոխութիւն կը կրեն, որչափ ազգային կառավարութեան, ըսենքնաև ազնուականութեան կեղրոնէն կը հեռանան :

Մարաց կողմերը բնակողներուն համար կաւանդէ կորիւն թէ կրթութեան և ուսմանց զժուարգնդեկը էին իրենց « խեցքեկագոյն » և խոշրագոյն » լեզուին համար : Ոչ նուազ անհանց կերպարանաց տակ կը ներկայացընէ նաև Սիւնեաց գաւառին բնակիչքը, « գազանամիտ, վայրենագոյն » և ճիւաղաբարոյ » կոչելով զիրենք, և յորոց ոչինչ ընդհատ էին (Փարսկահայոց) Փայտակարանի և Գուգարաց բնակիչք :

Սուրբն Մեսորով իր թէ աւետարանական և թէ ուսումնական առաքելութեան նախկին երախայրիքը՝ ասոնց ուկցեց նուիրել : Այդպիսի առանձին մտադրութեան մը արժանաւորութիւն չէին կրնար ունենալ՝ միայն կրթութեան անընդելըլլանուն համար . ուր պատշաճն ու հարկը կարծես թէ կը պահանջէր թագաւորական աթոռոյն մերձաւոր երկիրներէն սկսիլ : Հաւանական պատճառը այն կ'երենայ թէ

որչափ աւելի դիւրին էր բուն աշխարհն (կեղրսնին) լիզուն ընդելացընել, նյոնչափ ալ դժուարին՝ խուժազուժ ականջներու ընդունելի ընել այնպիսի բարբառ մը, զոր ընդհանուր և ամենուն իմանալի ընելու ջանքի ետևէ էր սուրբը, Անոր համար անոնց վրայ սկըսաւ նախ աշխատիլ. և երբ յաջողեցաւ իրեն «պարզախօս» և հուետորաբանս կրթեալս » ընել զանոնք, ձեռք զարկաւ «ի թարգմանել, 'ի զրել և յուսուցանել» :

Ի՞նչ կը նշանակէ պատմագրին այսպէս մէկէնիմէկէ կրթելու վախճանին հասնիր նշանակելէն ետքը, թարգմանութեան պարապիլը մէջ բերելը: Անշուշտ անոր համար, վասն զի կ'ենթադրէ և կ'ուզէր ներկայացընել զսուրբն Մեսրով՝ որ էական գժուարութեան մը յաջոնելէն ետքը, այնուհետև իր նպատակին համար մեծ արգելք մը պիտի չունենար:

* *

Սահակայ ու Մեսրովպայ ու իրենց առաջին աշակերտաց ջանքովն և ուսմամբք՝ զրական լեզուին իր յատուկ դիրքն առնելէն և զարգանալէն ետքը, լեզուի իրական բաժանմունքը կը հաստատուէր. որով զիրը կ'ունենար իր որոշ ու հաստատուն լեզուն, ու նաեւ քերականական ուղղութիւնը, և կը ձեանար գրաւոր կամ մատենազրական բարբառը:

Այդ զրական լեզուին յատուկ բովքը, ինչպէս ըսինք, կ'ըլլար ըստ ոմանց՝ 'ի հոյոց արարատեան կամ ոստանիկ կոշուածը: Բայց հաստատուն և որոշ ձեւ մը առնելէն ետքն ալ չէր կրնար խափան կամ արգելք ըլլալ ուրիշ գաւառավեցւաց. վասն զի թարգմանչաց ալ դիտած վախճանէն և նպատակէն դուրս գիրը, եկեղեցական ու արարողական կարևոր գրքեր, և ուրիշ զանազան ընտիր մատենագրութիւններ աղջին մէջ բազմացընելէն ու սփռելէն ետքը, իմանալի ընել զանոնք և օգտակար Հայաս-

տանի համապիթիւռ որդուոցը. բայց միտքերնէն ալ չանցնելով զրկել զանոնք իրենց յատուկ և ընտանեկան գաւառավեցուէն:

Հոն կը նայէր իրենց ջանքը և բազմաթիւ գպրոցաց հաստատութիւնը:

Անոնց մէջ կրթուող մանկութիւնը՝ ընդելական ու դիւրիմաց կը գտնէր իրենց աւանդուած գրական լեզուն. իսկ անոնցմէ գուրք խօսուած գաւագալիցուներն որչափ ալ յոկուելով մաքրուէին, գրաւորին հետ միանալէն կամ ձուլուելէն շատ հեռու կը մնային. և սովորական օրինակով մը ուղղով բացառորել. կը մնային լեզուներ՝ որոց բունը թէպէտ և մէկ սեպուի, բայց ճիւղերէն և ոստերէն առնուած պատուասոններ են:

Ասովչենք ուզեր ըսելմէ երբէք կամ բոլորովին աշխարհօրէն և կամ անոր մօտ եղող գրաւոր լեզու մը գործածած շըլլան նախնիք:

Նոյն իսկ հինգերորդ գարու մատենագրաց մէջէն՝ ասոր հակառակ վկայութիւն տառողը կը գտնէնք իրեն գրուածքովը: Թողունք յետագայ դարուց մէջ, յորոց ոմանք բոլորովին աշխարհիկ լեզու ալ գործածած են:

Օրինակ մէջ բերենք զՓարպեցի:

Թարգմանչաց գպրոցին մէջ մնած, ու առաջին աշակերտուներէն՝ Աղանայ արծրունոյն քով կրթուած, մեզի ծանօթերկու գրուածոց հեղինակէ. Գատմուրեանը և թղթի մը առ Վահան Մամիկոնեան: Մտագիր ընթերցուն որչափ ալ զգակի տարբերութիւն նկատէ Փարպեցւոյն այս գրուածոցը և իր ուրիշ աշակերտակցաց, և զարձեալ իր և անոնց վարդապետաց երկասիրութեցը մէջ, նոյն իսկ՝ մի և նոյն անձին գըշէն երած այս երկու գրուածոց ոճոյն մէջ մեծ ասարբերութիւն կը գտնէ: Զենքուզեր, վասն զի չենք ալ կրնար, ենթագրել մէ մի և նոյն գպրոցի մէջ, և հաւասար գովութեամբ, իր ուսմանց ընթացքը կատարող աշակերտակցից մը՝ այնչափ հեռու մնայ անոնցմէ, որ մինչեւ ուս այլոց զրուածքը հետեղութեան

գաղափար ընծայուին , իրեններն ինչ-
չուան աշխարհիկ լեզուի մօտենալու
չափ նուաստանան : Այս զանազանու-
թիւնն պէտք է որ իր պատճառն ունե-
նայ :

Հարկէ մէջ բերել զայն :

Այս գրուածներէն երկրորդն՝ առ
վահան իշխան Մամիկոննեան ուղղուած
է . իսկ առաջինն՝ գարձեալ նոյն անձին
խնդրանօքը , անշուշտ նաև ստիպերովը ,
շարագրուած : Այս պարագայն միայն
բաւական է ֆարապեցույն ոճյոյն զանա-
զանութեան պատճառը մեկնելու : Ան-
դագար զինուց և պատերազմաց պա-
րապող իշխան մը՝ կ'երենայ թէ ոչ Մա-
հակայ Բագրատունոյ և ոչ ալ Դաւթի
Մամիկոննենի կատարեալ հմտութիւնն
ունէր հայկական դրաւոր լեզուի . ուս-
տի թէ իր քաջագործութիւններն իրեն
յիշեցնելու , և թէ այնպիսի անձի մը
դիմաց ինքզինքն արդարացնելու հա-
մար բռնագատուած էր ֆարապեցին այն-
պիսի լեզու մը ընտրել որ ոչ բոլորովին
ժողովրդական ըլլայ , և ոչ ալ ամեննեին
դրական . այլ երկրորդիս վսեմութենէն
հրաժարիլ՝ առանց առաջնոյն հետ բո-
լորովին նուաստանալու . և այսպէս ա-
զատաց կրթութիւն ստացող վահանայ
հետ խօսիլ : Այս վախճանան երկրորդ
գրուածքին , առ նոյն իշխան զրած
թղթին մէջ , աւելի կ'ախործի ռամկա-
բաննել . վասն զի աւելի կ'ուզէր իմա-
նալի ըլլալ իրեն :

Մեզմէ ուժուն տարի առաջ՝ ֆար-
պեցոյն Պատմութեանը առաջին հրա-
տարակողը այս կարծէքն ունէին՝ իր
գործածած լեզուին համար . « Սորայս
պատմութեան կարգ վճիռ , յօրինուած
շարագրութեան քաղցր , և որպէս թուի
՚ի տեղիս տեղիս աշխարհիկ և ընտանի
ասացուածք այնը ժամանակի՝ այլ
յստակագոյն բերանոց և աղատ ա-
րանց » : Սոյն կարծէր ալ աւելի կը հա-
ւատարմանայ առ վահան Մամիկո-
նեան զրած թղթին հրատարակութե-
նէն ետքը , յօրում , ինչպէս ըսի՞ք , շատ
աւելի առատ ձեռքով սփռուած են աշ-
խարհիկ լեզուի տարերք :

* *

Վրայ կը հասնի վեցերորդ դարը :
Ալբունական աթոռը տապալած ըն-
կած , նախարարութիւնք իրենց ոյժն ու
ազդեցութիւնը կորուսած , աղդին ապ-
նուականութիւնը ցիրուցան , աշխարհը
ունակովս , — այշափ աղիտից ու
թշուառութեանց առևէ ինչպէս ազգին
բարոյական ու նիւթեական ոյժը , ասանկ
ալ բանափրութիւնը չէր կրնար ան-
տարբեր մնալ : Գրաբար լեզունիս , ինչ-
պէս քիչ յառաջ առիթ ունեցանք յի-
շատակել , մէկէն ՚ի մէկ կ'իյնայ . իսկ
աշխարհիկը երբ զանիկայ խօսող և
գործածող ազնուական մասը կը ստի-
պուի գերիլ , ու հեռաւոր օտարութեան
մէջ տառապիլ , լեզուն կը մնայ հասա-
րակ կարդի մարդկանց ժամանդու-
թիւն . ու կարծես թէ ալ չիկրնալով ա-
զատաց պատմուճանաւ ծածկուիլ , ին-
չուան ալքատութեան դրզեկի մէջ կը
բռնադատուի ամիսոփուիլ :

Օրինակ մէջ բերենք զբովհան Մա-
միկոնեան (Եօթներորդ դարուն կիսուն
մէջ) :

Այս անձին ընծայուած պատմական
գրուածքը՝ տւելի աշխարհիկ բանափ-
րութեան կը վերաբերի : Կրնար ան-
շուշտ լաւագոյն և ընտրելագոյն մատե-
նագրել Մամիկոննեանց գրաբար լե-
զուով . բայց նա իր բանափրական զի-
տութեան , սեպենք նաև աղաւազ ու
աղքատ բովքը , չէ ուզած պրապոել . այլ
նոյն ժամանակին մարզկանցը հետ , և
իրենց իմանալի լեզուով խօսիլ :

Կ'ուզենք կարծել թէ մեր այս խօս-
քը՝ ենթադրութեան մը անձուի և ան-
զօք սահմանէն բոլորովին դուրս կ'ել-
լէ , եթէ ուզենանք Մամիկոննի ժա-
մանակակից ուրիշ անձանց անուանքն
ալ մէջ բերել . օրինակ իմն , զիսմիտաս
կաթողիկոս , զինանիա Շիրակացի ,
զիթէոդորոս Քոթենաւոր , և այլն . Հայ
լեզուի և մատենագրութեան շափաւոր
անդեկութիւն մըն ալ՝ բաւական պիտի
ըլլայ իր ու ասանց ոճյոյն մէջ եղած

զդալի տարրերութիւնը ցուցընելու համար : Իսկ երբ Յովիշաննու իմաստափերի երկասիրութեանց վրայ ուղենանք ակնարկ մը ձգել, ա՛լ ուրիշ ապացուցի կարօս չենք ըլլար :

Բայց թէ կար այն ատեն ազգին մէջ նաև աշխարհիկ լեզուով գրելով սովորութիւնը, կը վկայէ Յովիշաննէս կաթողիկոս Պատմաբան : Իր գրոցը մէջ Շապհոյ Բագրատունոյ վրայ խօսելու ատեն՝ անոր շարաղբած պատմութեանն ալ խօսքը կ'ընէ : և գործածած լեզուն՝ գրուածքին հմտութեանն ու կարևորութեան անարժան կը համարի : « Ոչ կարացեալ, կ'ըսէ, ըստ քերթողական հրահանգայն ընձեռել, սակայն բայտ իշրումն ժամանակի գեղուուկ բանից ։ »

Այրաբական արշաւանքի Հայաստան, ու երկար տիրապետութիւն, կ'ունենան իրենց ազգեցութիւնը՝ նյին երկրին թէ գրաւոր և թէ խօսուած լեզուներուն կատամարք : Գրաւորին վրայ եղածը՝ յայտնի է նոյն իսկ իմաստափերին և բոթենաւորի գրուածոց մէջ . յորմէ աշխարհիկն ալ չէր կրնար զերծ մնալ : և թէպէտ այն ժամանակաւոր իշխանութիւն մը՝ բայց ժամանակաւ ընդելացած ու հաստատուած գաղափարը՝ դժուարաւ կ'անհետանան :

Բագրատունեաց ժամանակէն արդէն սկսած է բոլորովին միտում մը յաշխարհիկ : Իրենց ձեռքովը կանդնուած եկեղեցեաց որմունք՝ ինչուան հիմա ալ, իրենց աւերակ ու ամայի տիսուր դիրքին մէջ ալ, կը խօսին հետերնիս, և կը խօսին ժամանակին յատուկ, և գրութեան մեջ սովորական սկսած ըլլալ լեզուովը . « Ով 'ի յաթուէս հանէ, կ'ըսէն, կամ յուզել (ուզել) իշխէ, կայենի ու Յուդայի չափին ալ նղովեալ եղիցի » : Գրաբարէն առնուած լեզուով կը խօսին՝ երբ կը զրոցեն . « աղցաց ուրբաթանոյն » . — « եթէ որ 'ի քահանայից զայդ ժամէկ իսափանէ և կամ պղերգա և օր անցընէ » ... — « եթէ որ հակառակ զայդ յիմոց և յօտարաց », և այլն : Այսպէս ալ հետեւալ բառերն, և իրենց բազմաթիւ

նմաններն, որ այս դարուու գրուածոց մէջ կը սկսին յաճախել, ու բոլորովին աշխարհիկ են իրենց կազմուածքովն ու բացատրութեամբ . — Ազէկանուն, աղէկահեր, աղէկանձն, աղէկախօս, աղէկագործ, աղէկաբար, աղէկադուչ, աղէկերես, աղէկհաւատ : — Աղուորերես, աղուորզբոյց, աղուորութիւն, և այլն : Այս բոլորովին աշխարհիկ առմանց ու բացատրութեանց հետ՝ այլազգի բառեր ալ կը խառնուին, ինչպէս նայլար, փէիղամպէր, ապիղար, և այլն :

Նախնեաց գրած ու հասկըցած լեզուին՝ նշանաւոր կերպով աղաւաղելուն ժամանակին են երեքտասաններորդ և չորեքտասաններորդ գարերը . և այս աղաւաղութիւնը ոչ միայն օտարութակաց՝ ազգին լեզովին հետ խառնուելովն է, որ գիւրաւ կիրնար մաքրուիլ ու զտուիլ, այլ շարագասութեան և համաձայնութեան փոփոխութիւններով . և անոնցնով է որ լեզուին ոգւոյն վրայ ամենամեծ յեղափոխութիւն մը կ'ըւլայ, և զոր դիւրին չէ դարմանել . վասն զի աւելի զժուարին է գաղափարնեւ . ըրու և մտածութեանց կերպը փոփոխեան թէ բառերը :

Երեքտասաններորդ գարու գրիչ մը (Սմբատ պատմիչ), աշխարհիկ լեզուն իր բնական վիճակին մէջ կը ներկայացրնէ մեզ : իր անուամբ ինչուան առմեզ հասած գրուածոց մէջ հասարակ են այնպիսի բառեր, ոճեր և լեզուի յատկութիւններ, որ հիմա ալ Հայաստանի շատ գաւառալեզուաց զարդն ու գեղեցկութիւնն են :

Քանի մը օրինակներ կրնան հաւատարմացընել մեր խօսքը .

իր առել . — առեալ էր :

ի նոցմէ . — 'ի նոցանէ :

կո զայր, կո զեայր . — գայր, զնայր :

Ըդորդ . — ուղորդ :

Հայեց . — այնպէս :

Լընցուցանք . — կատարեցաք :

Պոման . — պայման :

Ցուցընէ . — ցուցանէ, ցուցը :

կմնան. — Կայցեն։
Վասն այտոր. — Վասն դորա։
Հերիք եղան. — Հերիքացաւ։
Երե փարսուն տարոյ լինի, — ծառուրիւն, —
զեն, — եկիչ եմ. — և այլն։

* *

Սակայն աւելի աղետալի ժամանակը պահուած էին հայ լեզուին և անոր բանասիրութեանը թուրինեանց վերջին թագաւոր լեւոնի վեցերորդի անկումը, թագաւորական գաւազանին անոր տկար ու անօգնական ձեռաց մէջ ջախջախիլը, թշնամեաց ասպատակութիւնք և բնակչաց աստանդական ցրուիլը՝ եթէ ազգին կենսական ոգեսյն մահ մը կը սպառնան, նոյն ժողովրդեան սովորական լեզուին ալ լաւագոյն ապագայի մը ակնկալրութիւն չեն կրնար տալ։ Հայաստանի որդիքը մասամբ ցիրուցան օտար երկիրներ, և բազմագոյնք ևս՝ նոյն իսկ իրենց հայրենի հողոյն վրայ գերութեան և զլիթայից գատապարտուած, լեզուներնուն վրայ պիտի կրէին իրենց օտարութեան և գերութեան կնիքը. ոչ միայն իրենք պիտի կրէին և արտասուեին, հապա մեզի ալ՝ իրենց հեռաւոր թռոներուն, կրել և արտասուել պիտի տային։

Արշափ գառն էր իրենց համար թողուկ հայրենիքը և անոր մէջ գտնուած քաղցր ու սիրալիր յիշատակներն. թողուկ և անդարձական հրաժեշտի բարև մը տալով այն երկնանման տաճարաց, պայծառ արքունեաց, խաղաղ բնակութեանց, և ինչուան՝ անմահութեան յիշատակաւը խառնուած մահուան գերեզմանաց. և սակայն սուր և հուր և բռնութիւն կը հալածէր զիրենք. լեռմը, գետ մը պիտի շրլար զիրենք՝ իհայրենեաց բաժնու արքուն ալ արտասուելուն և կարծես լուռ երդմունք մը կը կնքէր չօտարանալ իր հայրենի աւանդութիւններէն և լեզուէն, որչափ ալ բռնադատուած էր հեռանալ իր հողէն։

Մոլթիւնը հաւաստիք է մեր խօսքին, վերջին գաղթականութիւնք են Հայաստանի ամենէն աւելի մերձաւորք. իսկ առջիններն կը նկատենք՝ հեռացած այնչափ աւելի հեռու՝ որչափ աւելի սոսկալի էր թշնամունքն վախր և գդրնդակ անոր բռնութիւնը, հարկ կ'ըլլայ ծովերու ընդարձակութիւնը կորել անցնիլ, և այն բնութեան գրած զբանարամատոյց պատուարներէն ալ անզին փոխազդել իրենց բնակութիւնը. Եւ կը աւետնենք զանոնք ցրուած ոչ միայն 'ի Տաւրիա և 'ի Մոլտաւիա և կամ 'ի Վալաքիա, այլ և ընդ բովանդակ իտալիա, և լեհաստան, և վերջիրը մինչեւ 'ի սահմանածայրս Հընդկաց։

Այսուհետեւ, աւանդութիւնք և յիշատակարանք չեն մոռնար յիշատակել թէ որպիսի սրուով և եռանդեամբ կը հեռանար Հայն իր երկրէն. թէ ինչպէս իր սիրելեաց, որդւոյն ու բարեկամաց հետ կ'առնուր նաև իր եկեղեցական սպասներն, իր գրչագիր մատեանքն ու յիշատակարաններն, և հեծութեամբ իր հայրենեացը վերջին բարեկ տարուատեն ալ, արտասուօքն կը թանար իր մնայուն յիշատակներն ալ, և կարծես լուռ երդմունք մը կը կնքէր չօտարանալ իր հայրենի աւանդութիւններէն և լեզուէն, որչափ ալ բռնադատուած էր հեռանալ իր հողէն։

Սակայն պիտի կարենամբ արդեզ իր խոստմանը վրայ հաստատուն կենալ, կարելի է գետի մը, որչափ ալ մեծ ըլլայ, դէպ 'ի ծով թափութիլ տեսնելով, տարակուալ անոր խառնուելուն և կորսուելուն վրայ. Նման զիրքի մը մէջ է Հայաստան այն ազգաց նկատմամբ՝ որնց հետ կը խառնուի. Որչափ ալ առջի բերան հաստատուն մնալ ուզած ըլլայ իր դիտաւորութեանը վրայ, անտարակոյս ժամանակն իր ազգեցութիւնը պիտի ունենար. և նախնեացը ձեռքովն ու սրտով ինչուան հոն բերուած ազգային յիշատակարանք և սէր՝ պիտի սկսէին պակսիլ ու ալօտանակ. ու այլ և այլ կրօնական, քաջաքական և ըն-

տամնի յարաբերութիւնք՝ զօրաւորագոյն ձայնով մը պիտի սկսէին խօսիլ և շատերէն լսելի ըլլալ.

Թողով ուրիշ յարաբերութիւններն, որ մեր նպատակէն գուրս են, լեզուի զգալի կերպարանափոխութիւնը մեծ ապացոյց մըն է մեր խօսին ստուգութեան: Ո՞րն էր արդեօք հին Ծնեցոց լեզուն: Անտարակոյս այնպիսի մեծ և ընդարձակ մայրաբաղապի մը արժանանաւուր բարբառ. ուր որ ժողովուած էր արքունիք, ազգին քաղաքակոն ալնուականութիւնը, եկեղեցական նույնապետութիւնը, անկարելի էր որ անկէ մերժուած ըլլար լեզուի վայելլութիւնն: Մտնենք անոնց գաղթականութեանց երկիրները, լսենք Տաւրիոյ, Մոլոտ-Վալաքիոյ և Լեհաստանի ազգայնոց խօսած բարբառ. կարզանք անոնց ձեռքով ասկէ իրեք չորս գար առաջ գրուածներ, և պիտի տեսնենք յայտնապէս թէ որչափ ազգեցութիւն ըրած էին վրանին՝ այն ազգաց, որոնց հետ խառնուեցան, լեզուն և մոտածութիւններն, և զանոնք բացատրելու եղանակը: Ասիկայ չենթադրելլ՝ բնականէ դուրս պահանջողութիւն մըն է, և առ որ բաւական չէ միայն ջանքն. այլ հարկ էնակ ուսում և ուսմանց միջներ ունենալ:

Ազգերնուու քաղաքական իշխանութեան իյնալը, և անոր հետևանք աղէտ, նոր բամբելնի աշտարակի մը հին պատմութիւննը մեզի յիշեցրնել կուտան: Այն ատեն ցրուեցան մեր ազգայնք, և անով եզաւ լեզուներնուու խառնակութիւնը: Ալ անկէ ետքը հարկ է որ երկուքի բաժննենք մեր ազգը. մէջ, մը անոնք որ իրենց բնիկ երկրին մէջնեն, և մէջմըն ալ անկէ դուրս եղողները: Նզին բաժանումը հարկ է որ ընենք նաև լեզուին վրայ. Հայրեննեաց մէջ, և անկէ դուրս, և քիչ մը ետքը ուրիշ երրորդ օտարութիւն մը, հայրենիքէն ալ այնշափ հետու գաղթականութեամբ կեցող ազգ մը, հահարասեանց և թիմուրեանց սրովը ոչ եթէ կամաւոր՝ այլ

բռնի տարուած և ձգուած դաղթականութիւն մը:

Այս բաժանումը՝ իր մէջը կ'ամփոփէ նաև լեզուի բաժանում մը:

Հայաստանի մէջ աւելի հին լեզուի մօտ է այսօրուան խօսուածին կազմութիւնը. բառերը ընարելագոյն, բացատրութիւնքը աւելի ազգային: Եթէ ունի իր մէջը բրտածայնութիւն մըն ալ, անիկայ հնչման արդիւնք է, որով լեզուի մը արտաքին գեղեցկութիւնը կըրնայ կերպարանափոխ ըլլալ, այլ հոգին և կազմութիւնը մի և նոյն մընալով,

Հայրեննեաց երկրէն դուրս, որչափ աւելի հեռանայ լեզուն իր բարգաւաճանաց կերպնէն, այնչափ աւելի կերպարանափոխ կ'ըլլայ: Նորանոր եկամուռ բառեր, բացատրութեանց ոչ ազգային կերպեր, և վրան նիւթական կամ բարյական ալլեցութիւն ունեցող ազգին ուժոյն, կամացը և բազմութեանը համաձայն ալլայլութիւններ կը կրէ նաև կազմութեանը և ոգւոյն մէջ. և որչափ շատ ըլլայ օտար տարրը, կամ որչափ նուազ ազգայինը, անոր համեմատ կ'ըլլայ նաև լեզուին կրած ազգեցութիւնը: Ասով ընտրելագոյն կամ աւելի հարազատ կ'ըլլան ոռուիաբնակ չայց, հին ու նոր Զուղայի բարբառներն, և նուազագոյն ազգային յատկութիւններ կ'ամփոփեն լեհաստանի կամ Մաճառաց, կամ նոյն իսկ Փոքուն Ասիոյ շատ տեղերուն, և մանաւանդ Տաճկաստանի մէջ բնակող ազգայնց լեզուներն: Այս վերջինս, մանաւանդ մայրաբաղապին ու շրջակայից մէջ խօսուածը, կրնանք ըսել թէ ամենէն աւելի մաքրուածն է եկամուռ նորութիւններէ, մանաւանդ երեսուն վերջի տարիներու մէջ ստացած զրաւոր նախապատութեամբը. բայց ոչ իր գրականական լեզու ըլլար, և ոչ ալ յատկութիւնը յօտար բառից կրնանիկայ հաւասարեցընել ուրիշ ազգային գաւառալեզուաց, մինչեւ զուրկէ անոնց քով գտնուած նախնական կազմակերպութենէն և 'ի հոգւոյ:

* * *

Ասիկայ է մեր նոր կամ աշխարհիկ լեզուին համառօտ պատմութիւնը :

Թէպէտ և յատուկ ազգային ճոխութիւն մը, և կամ անոր նուազութեանն արդիւնք ուղենայ մէկը սեպել, իր այս օրուան ընդունելի և օգտակար դիրքովը, մեր մտադրութեանն արժանաւոր է: Անանկ որ նոր լեզուին՝ ազգային կրթութեան արդէն մատուցած կամ ասկէ ետքը մատուցանելի կարևոր ժառայութիւնը ժխտելը, և հին լեզուին դառնալ կամ ազը գարձընել ուղելը, նոր լեզուները խափանելու համար, ընդունայն ու վասակար ջանք մը պէտք է սեպուի:

Բայց աշխարհիկ գաւառակեցուաց այս անհրաժեշտ գիրքին մէջ՝ արդեօք արժան է զոհել գրաբար լեզուն: —

Այսպիսի առաջարկութեան կամ վտանգի մը առջն, — թէպէտև հեռաւոր լուայ, — ամեն ճշմարիտ հայ կը պարտաւորի իր ձայնն ու բողոքը բարձրացընել, քանի որ համազուած ենք թէ նախնեաց ու մեր մէջ եղած միաւորութեան այդպիսի գեղեցիկ կամուրջ մը խորածակողը; հին ու նոր սերունդը իրարմէ զատել ուզողը, թշնամեաց աւարառու և աւերիչ սուրերէն աւելի ֆասակար է հայրենեաց: Բայց որովհետև աշխարհիկ լեզուաց կարօտութիւնն ալ անհրաժեշտ է, արժան է հաւասարապէս ջանալ մշակել թէ հին և թէ նոր լեզունիս, և ոչ իսկ ուղելով մոքէ անցընել մէկը մէկալին զոհելու անտեղի և ֆասակար խորհուրդն ու ջանքը. մանաւանդ որ նոյն իսկ վերջի տարիներու փորձն ալ կը ցուցընէ, թէ նոր լեզուաց մշակութեամբն՝ հինն ալ կինայ ծաղկիլ ու բարգաւաճիլ: Բայց ինչպէս անհանգութելի են հին լեզուով եղած աղաւաղ գրութիւններ, ասանկ ալ փափաքելի է որ նոր լեզուին միշնորդութեամբ՝ գրութիւնը հասարակաց օրինաւոր ստացուածք մը դառնալէն ետքը՝ այնչափ չնուաստանայ այն

նոր լեզուն, որուն օրէ օր աւելի կարգաւորուելուն կարօտութիւնը կը ըզգանք, քան թէ նոյն հաստատուն կարգին մէջ դեռ չմտած՝ մէկէն 'ի մէկ խանդարուելուն:

Այս նպատակաւ վերջին տարիներու մէջ մասնաւոր ջանք մը կը տեսնենք՝ քերականական կամուններու մէջ ամենովիլ և սահմանել այդ նոր լեզուն:

* * *

Բայց որ լեզուին վրայ պէտք է հանգչի՝ քննադատ բանասիրաց նախամեծար ընտրութիւնը. որպէս զի մշակելով զայն, կարող ըլլան ազգին լրութեանը առաջարկել ընդունելութիւնը:

Խուժան մը աշխարհիկ կամ գաւառական լեզուաց կ'ելլեն մեր առջիը. և որոնք իրազմէ այնչափ կը հեռանան, որ ինչուան մէկ մէկու անիմանալի ըլլալու դիրքի մէջ կը զտնուին:

Ասոր դարմանը պէտք էր որ ընէր անկողմնաւէր, իմաստուն և ողջախահ բանադատութիւնը:

Երկու հարիւր տարիէ 'ի վեր՝ այս մտածութիւնն ու ջանքն ունեցող ազգասէր ու խոհական մոքեր երևեցեր են: Գուշակելով, մանաւանդ թէ տեսնելով որ աշխարհիկ լեզուն նաև մեր մէջն ափիտի դրաւէ այն անհակառակելի դիրքն, ինչ որ ուրիշ եւրոպական ազգաց և մատենագրութեանց մէջ, ջանցեր են քերականական կանոնի մը տակ ձգել զայն:

Այսպիսի ձեռնարկութեան մը ոչ լոկ մտածութիւնը, այլ նաև գործադրութիւնը Միսիթարայ Աբրայի կը պատկանի:

Արդէն սովորական աշխարհիկ լեզուն՝ տպագրութեամբ, որչափ որ մեղի ծանօթ է, առաջին անգամ վենետիկ քաղաքին մէջ կը հանդիսանայ, յամի 1885-87, գունսազարի որդի նահապետի ջուղայեցւը՝ յատուկ գործարանի մը մէջ և իրեն դրամական նպաստիք, և Յովհաննու Հոլովի աշխատասիրութեամբ: Այս գիրքը որ Պարզա-

քանորդիւն հոգենոցագ սաղմոսացն դարի կը կոչուի, հեղինակին՝ իր ուրիշ երկասիրութեանցը մէջ գործածած անհարազատ գրաբար լեզուովը չէ, այլ անըուշ 'ի խնդրոյ, թերևս նաև 'ի ստիպելոյ նահապետի և ուրիշ հայ վաճառականաց որ 'ի վենստիկ, աշխարհիկ բարբառով: Բայց Հորով չէ ուղած ջուղայի հասարակաց բարբառը գործածել: որ տեղույն վաճառականաց աւելի զիւրիմանայի պիտի ըլլար, և իրեն ալ անշոշտ ծանօթ, և ոչ ալ իր ծնընդեան քաջրին (*Պոլի*) բնակչաց աղաւաղ լեզուն: այլ այնպիսի մնաքուր և Վսպրկիկ աշխարհիկ բարբառ մը, որ կերպով մը կրնայ մօտենալ մեր դարուն յոկեալ և գրաւոր լեզուին, մաքրուած անհարազատ բառերէ և ոճերէ, և մերձաւոր 'ի գրոց բարբառ:

Այսպիսի էր նաև Միսիթարայ Աբրայի խորհուրդն ու փափաքը, երբ յօրինեց ազգերնուս մէջ առաջին աշխարհիկ լեզուի քերականութիւնը, որ գեռանտիպ մնացած է իր երկասիրութեանցը մէջ, և միայն համառօտութիւն մը տապագրուած 'ի 1727:

Այլ և այլ գաւառական լեզուաց մէջ ամենին աւելի զիւրիմացն ընարեր է Միսիթար Աբրայ, փափաքելով որ քերականական կանոններովն առաջնորդէ 'ի զիւրել զուսումն գրաբարի, զոր կը ջանար ծաւալել և ընդ հանուր ընել աղդին մէջ:

Երեք կերպ հոլովներ կը գնէ Միսիթար՝ եր ընտրած ու առաջարկած աշխարհիկ լեզուին:

Նախ՝ որոնց եղակի սեռականն է գրով կը վերջանայ. (Հաց, հացի, մանդաղ, մանդաղի): Ասոնց յոդնակի ուղղականն, եժէ անունը միաւնակ է, որ կը վերջանայ. (— հացեր, գետեր). իսկ եթէ երկավանէ կատ բազմավանէնք. (— մանդաղներ, առաներ):

Այս կանոնին զարառուղութիւններն ալ կը գնէ և կ'որոշէ:

Երկրորդ. հոլովնեմ՝ որոց եղակի սեռականը և կը վերջանայ. (առաւտ, առաւտու. հաւ, հաւու). և յոդնակի ուղղականներն՝

Պրոպ. 4.

եթէ բառը մավանկ է եր (— հաւեր), իսկ եթէ բազմավանէնք նէր. (— առաւտուներ): Երրորդ հոլովնենն եղակի սեռականն ան կը վերջանայ. (գուռն, գրան, որդն, որդան): յոդնակին մըշտնէր. (— գուներ, որդներ): Զարտուուք հզնդ հոլովներ ալ կը գնէ.

ինըսկն

1. Տէր, ուրու. ու յագնակի Տիրուուր.՝
2. 0 Եւէմոյ, Եւբոր. « « Անէրուուր.՝
3. 0 Օր, ասուր. « « Օրէր.՝
4. 0 Տիրունի, ուրունէ, պիրունիչն, անցոգնակնաւ:

5. 0 Արամ, Արտամ, անցոգնակնաւ:

Դերանուններն են, գնէ: Դաս, դաս: Ան, ան: Ան: — Ան, անք: — Ան կամ Ար, ան: Ան կամ Սվյա, անք: — Իս կամ Գլի, անք: — Իս կամ Նվյա, անք: — Իսն, իւն: Մերու, յերու, անեղական:

Բայցը կը լծորուէ Եմ, ես, է: Անկատար ժամանակի առաջին դէմք եսն: Ան անէ ալ ներդործական ուրիշ բայցը լծորդութեան մէջ կ'ըսէ ու կը սովորեցնէ. կը գիւնան, — Մէրկան, — Մէրսուր եսն: կը սեռանեն, և այլն:

Մեր գրուածքին չափն ու նպատակը կը ստիպէ զմեզ հօս կանկ առնուլ, բաւական սեպելով յիշեցնել թէ այս նախրնծայ քերականական երկասիրութիւնն՝ ընտիր տեսութիւններ ու զիտողութիւններ պարունակելով մեր նոր լեզուին ու անոր բարեկարգութեանը վրայ, մասնաւոր մատղրութեան արժանի գրուած մըն է:

Վրան շատ տարիներ անցնելէն ետքը, սկսան աշխարհիկ լեզուով գրութեանց հրատարակութիւնք երենալ ազգերնուս մէջ: Ասոնց մէջ գործածուածը՝ Պոլեցի ազգայնոց լեզուն էր. սակայն զանիկայ յզկելու և կանոնի մը վրայ առնելու ջանքը պակսելով օտար ու այլազգի բառեր, խորիդ ոճեր և բացատրութեանց կերպեր միան յաճախել այն գրութեանց մէջ: Ասանկով գրադէտք չհրաժարեցան ինչուան ուամիկ ու ժողովրդական լեզու մը գործածելու նուաստութենէն, անոր միտքն աղնուացընելու, կրթութիւնն և ուսումնը բարձրացընելու գովելի դիտմամբ:

Աշխարհիկ լեզուին այս անկերպարան և անկանոն վիճակին մէջ աղդա-

սիրութեան և ուսմանց եռանդ մը սկը-սեր էր բորբոքիլ յազգին։ Օրագրաց և լրագրաց հրատարակութեան և յառաջադիմութեան սկզբնաւորութիւնը այն ատենին կը պատկանի։ Ասոնք գեղեցիկ ու նուիրական պարտք մը առած վրանին, իրու բերան և թարգմանք ազգին լրութեան փափաքանացը, սկսան պահանջել որ աշխարհիկ լեզունիս սրբուի մաքրուի եկամուտ նորութիւններէ, և ըլլայ զօրաւոր գործի մը ազգային բարգաւաճանաց և յառաջադիմութեան իրենք էին ոչ միայն յորդորողք ու քաշալերք, այլ նաև առաջին ընտիր օրինակները տուրոներ իրենց յօդուածներով։ Եռանդուն ու հանճարեղ գրիչք՝ ինչուան ազգային գեղեցիկ քերթուածներ ալ հրատարակեցին՝ աշխարհիկ մաքրու լեզուով։

Այսպիսի համածաւալ փութոյ մը և ջանկի ատեն՝ աշխարհիկ լեզուին կանոնաւորուելուն արդէն յուղուած ու վիճուած խնդիրը՝ մեծ կարևորութիւն մը առաւ։ Այն ատեններն (1853) հրատարակուած է Ռուդախսուրիին արդի հայ լեզուի կողուած՝ հայերէն աշխարհիկ կամ խօսուած լեզուի քերականութիւն մը։ Քանի մը բանի բուհուն և ազգասէր անձանց համամիտ խորհրդակցութեանն ու ջանից արդիւնք է այս երկասիրութիւնը։

Տեսնենք գրիփին սկիզբը դրուած յառաջարանին քանի մը տողերը։

« Մեր ազգն ալ, կ'ըսէ, շատանց ՚ի վեր իր հին լեզուն՝ ան վեմ գրաբառը կորուսած, կը զգար իր կրթութեանը համար ընդհանուրին հասկընալի ազգային լեզուի մը կարօտութիւնը։ Աս լեզուն կար, բայց այնչափ խեղճ վիճակի մէջ էր, որ ոչ ոք կը համարձակէր լեզու ըսնելու անոր։ Սակայն տաս տասնինկ տարիէ ՚ի վեր, ուսմանկան անձէր՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով զանի շատ շըսկէցին շըսկըշտէցին։ և ազգն իր հին կորուսած լեզուին տեղունէ ասօր, թէ ոչ կատարեալ, գէթ

բաւական գործածէլի արդի լեզու մը ազգային։ Աս արդի լեզուն կանոնաւորէլու, և միանդամայն կատարէլութեան շատին մէջ քայլ մ'առաջ մղէլու մըտքով է, այսինք՝ անոր աւելի պարզութիւն, ճշշտութիւն, անուշութիւն, ուղղագրութիւնը զիւրութիւն, և բառերուն համառօտութիւն տալու մըտքով է, որ ձեռք զարկինք՝ ուսման անձերու խորհրդակցութիւնը, ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին։ Այս աշխատութիւնն ուշադրութիւն աշքէ անցնօղը կը տեսնէ, որ սովորութեան դրած կանոննէրուն հետեւած էնք ամէն նոր որ բանաւոր պատճառան ուրիշ կերպ մը չ'է ցուցած։ միայն զգուշութիւնը ու հասուն դատմամբ անոնցմէ ինչ ինչ ամփոփած ու միաձեռւեան տակ ձգած էնք։ Մեր աշխատութեան ընթացքին մէջ արդի լեզուն դրաբառին ըստ կարի մօտեցընելու նպատակն ալ երբէք աշքէրնէս շըհեռացնէլով . . . Գլխաւոր բան մը աս ուղղախօսութիւն մէջ ան է, որ հորվումը մէկի վերածած էնք. որով ամէն բառ ընդհանրապէս միօրինակ կրնան հորվպիլ նոյն վերջաւորութիւնը. բաց քանի մը բառէր, որոնց արտուղութիւնն անկարելի երեցած է մէզի կանոնաւորէլ»։

Այս հատուածը՝ յօրինողաց ոչ լոկ փափաքը, այլ նաև գործ աղբութեան առաջարկութեան կերպը կը ցուցընէ. և գոր ընդունելի և հաճայական ընելու դիտմամբ նոյն լեզուով և ոճով շարադրուած մատենիկ մը, Տարեցոյց անունով, հրատարակեցին։

Աշխարհիկ լեզուին կանոնաւոր բարեկարգութեան փափաքն ընդհանուր էր, ինչպէս ըսնիք, բոլոր ազգին մէջ. բայց եղած առաջարկութիւնն և տըրուած օրինակը հաճոյ շեղաւ։ Ուսումնական ժողովոյ մը յանձնուեցաւ անոր քննութիւնը. և ազգային ձեռնհաս իշխանութիւնն մասնաւոր ազգարար գրութեամբ մերժեց զայն։

Պատճառան ալ յայտնի էր։

Փոխանակ ազգին փափաքանացն հա-

1 Պոլս, Միւհէնիսեան տպագրութիւն։

մաձայն՝ աշխարհիկ լեզուի մը կանոնաւորութեան, առաջարկուած գրուածներով կարծես թէ ուամկական բարբառոյ աղաւաղութիւն մը յարգուեր, և կանոնի վրայ ուզուեր էր աւնուիլ. մանաւանդ ուղղագրութեան նկատմամբ: Բառերու և բացատրութեանց ընտրութեանն ու ծցութեան մէջ ալ շատ փափաքելի բարւորումներ կը պակսէին:

Ցանումէկ տարուան լրութենէ մը ետքը՝ ուրիշ համանպատակ երկասիրութիւն մ'ալ երեցաւ, և էր. Հայերն քերականուրիւն աշխարհաբար լեզուի նախակրակական դպրոցաց համար՝ կոչուածը: Աշխատափրովն Մ. Տ. Քիրէճնեան՝ գրուածքին սկիզբը դրած համառօտ յառաջաբանին մէջ, առանց նախընթաց ու ազգին անընդունելի գրուածին խօսքն ընելու, կը յիշեցընէ այսպիսի քերականութեան մը կարօտութիւնը, և իր փափաքը այնպիսի պակաս մը լեցընելու:

« Սակայն այսպիսի լեզուի մը, կ'ըսէ, որ տակաւին սողղեալ, կարգաւորեալ և համառատ հիման վրայ չէ կզրոցուի ընդհանրապէս, անոր կատարեալ քերականութիւն յօրինելու 'ի հարկէ ոչ կվատահի, անկատար բանի մ'ալ ձեռք զարնելու ոչ ոք կիրախուսի. և թերեւս այս պատճառաւ ազգիս քերթողներն ժամանակ չոտուին մինչև հիմա այսպիսի աշխատափրութեան: Բայց մեք կէս մը մեր դպրոցներուն թախանձանքէն ստիպեալ, և կէս մ'ալ սիրելի ազգիս գեռահասակ դասուն ըստ կարի վայելուչ զպրութեան առաջնորդելու փափաքելով... ձեռնամուխ եղանք այս քերականութիւնն պատրաստելու. և միանդամայն մեր ազգային յարգոյ քերթողներուն դիտողութեանն յանձնելով»:

Արգէն իրմէ առաջ ամերիկացին ՈՒԻԿ՝ տեղեակ հայերէն արգի լեզուի, համառօտ քերականութիւն մը յօրիներ էր աշխարհաբարի՝ անգղիարէն:

բացատրութեամբ, և որուն հետևող եղած է Քիրէճնեան, և կամ ինչպէս ինքն կ'ըսէ, անոր « քերթողական արուեստին քաջահմուտ տեսաւթենէն օգտուած »: Բայց փափաքելով կարելի եղածին չափ գրաբարի քերականական կանոնաց համաձայն՝ աշխարհաբարի ուսումն աւանդել ու դիւրել, հին լեզուին համար յօրինուած ու ազգին ընդունելի քերականական գրուածոց դասակարգութեան, բռնած ուղղութեան և աւանդուած կանոններուն մանողութեան մեծ և գովելի չանփ մը կը տեսնուի:

Այսպիսի նպատակաւ ու գիտմամբ յօրինուած երկասիրութիւն մը՝ իր մէկ քանի թերութիւններովն ալ, չէր կը նար ազգին համակրութեանն արժանի չըլլալ:

Բայց հայ աշխարհիկ լեզուի՝ մեծագոյն ծառայութիւն ընող հմտական երկասիրութիւն մը գեռ փափաքելի էր բանասիրաց: Այս կարեւոր պէտքն լցողնող՝ Այսլնեան չ. Այսէն վարդապետի հմտւտ գրիչն եղաւ, Քննաւ կամ քերականուրիւն արդի հայ լեզուի կոչուած գրքովը¹: Բազմաթեզու և բազմագէտ հեղինակին՝ արժանապէս պատի ընող այս աշխատափրութիւնը՝ տպագրութեամբ հրատարակուեցաւ 'ի 1866: Աշխարհիկ լեզուին անցեալն ու ներկայն հմտւտ ու կարգաբան ոնով քննութեան առնուած է՝ ընդարձակ Ներածութեամբ մը. յորում շատ անլրւծանելի կարծուած խնդիրներ՝ իրենց լուծումը գտած են, և միին կամ անորոշ համարուածներ՝ լուսաւորուած: Խսկ արդի լեզուին համար սահմանած քերականական կանոններն, հողովմունք և լծորդութիւնք որչափ ալ մասնաւոր ուղղութիւն մը ունին, այլ միշտ հին լեզուին մօտեցընելու չանքով մը:

1 Պոլիս, Յ. Փափագէան տպագրութիւն:

1 Վէհնա, Միիթարէան տպարան:

**

Հայերէն աշխարհիկ լեզուն իր քերականական ուղղութիւնն ունենալին ետքն ալ, վրան յուղուած ինդիրներն ալ աւելի սաստկացան բանասիրաց մէջ :

Ոմանք՝ չափէն աւելի եռանդուն ջատագովք և պաշտպանք նոր լեզուին, ինչուան հինը աւելորդ սեափեցին, ու մանկութեան վարժարաններէն ալ դուրս ձգելու մտածութիւնն ու փափաքն ունեցան. և տեղ տեղ ալ ՚ի գործ դրին :

Այսպիսիք չէին կրնար իրենց հակառակամարտ ոսոփքը չունենալ դրական ասպարիդին մէջ :

Այս տողերը գրելու ատեննիս ալ դեռ կը յուղուին հին ու նոր լեզուներնուս վրայ եղած խնդիրներն :

Սակայն նշանակութեան արժանի են՝ լուրջ հրապարակագրի մը այս նկատմամբ ըրած խորհրդածութիւններն, և որոնց վրայ կը հրափրենք ազգայնոց մտադրութիւնն :

Աշխարհաբար լեզուի դրականութիւնն ուղղելու, մակերու և բարւոքելու խնդրոյն, մեր սկզբունքն այս է : Այս կէտերուն մէջ, ուր աշխարհաբարը դրաբարին համաձայն է, փոփոխութիւն բնաւ պէտք չէ մոյցընել. իսկ ուր թեթև խոտորում մը կայ, ուղղել և դրաբարին համաձայնեցնել. ապա թէոչ, աշխարհաբարը դրաբարէն ևս քանդկու հեռանալով, մեր նախնեաց գործածած բուն ազգայն լեզուն բոլորու

մին անհասկանալի կ'ըլլայ և մեռելութեան կը դատապարտուի. աշխարհաբարն ալ իւր հիմն և ուղղութիւնը կորուսանելով, անիշխանութեան կը մատնուի . . . և հետեաբար որչափ զրիչ այնչափ տեսակ աշխարհաբարը լեզուկ'ունենանք իրարմէ տարբեր, և մեծ մասամբ իրարու հակառակի :

«Գրաբարը գործածական լեզու ընել ուղղ կամ երազողներէն չենք . . . բայց աշխարհաբար լեզունի՞ զրաբարէն աւելի ևս հեռացընելու գտղափարին կամ զրութեան ալ կուսակից չենք : Կ'ուղենք որ մեր աշխարհիկ լեզուն իւր արմատին հետ առնչութիւնը պահելով, և անոր օգնութեամբ ինքզինք օրքան զօր կատարելազործելով, մեր նախնեաց բարբառը բոլորովին չօտարանայ և անհասկանալի չըլլայ մեր սերնդոց . . . Եւրոպական մշակեալ լեզուաց՝ գեղեցիկ ձևերն ու ոճերը մեր աշխարհաբար լեզուին մէջ մոցընելու և զայն ճոխացընելու կամ վայելացընելու զրութեան ալ դէմ չենք »¹:

Փափաքելի է՝ որ այս ու ասոնց նման խոհական անդրադարձութիւններ՝ առաջնորդ ըլլան աղգին, աշխարհիկ լեզուաց կարենոր ու կենսական խնդրոյն մէջ: Գործադրելու ջանքն ալ դպրոցաց ու դաստիարակաց խնամոտ փութոյն արդիւնք և արգասիք պէտք է ըլլայ²:

¹ Մատու. Ծագիր. Թիւ 213:

² Ծամիսամին. — Հրատարակուելու վրայ եղող Հայութին նոր Մատէնագրութեան պատմութենէն քաղուած: